

ՆԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՏՈՐԸ

Նայասարանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի «Գիտություն» հրապարակչությունը լույս է ընծայել «Դիվան հայոց պատմության» նոր շարքի երկրորդ գիրքը, որ բովանդակում է Ղուկաս Կարնեցի Ամենայն Տայոց Տայրապետի 1786-1792 թթ. ընթացքում շարադրած նամակները (թվով 1823), կոնդակները, առաքված գրությունների վերաբերյալ կազմված համառոտագրությունները: Ինչպես Դիվանի նախորդ Առաջին գիրքը, որն ընդգրկում էր 1780-1785 թթ. գրված 1178 կոնդակներն ու նամակները (տպ. Երևան, 1984), այս գիրքը ևս (որի վրա տպագրիչների մեղքով թյուրիմացաբար արձանագրված է «Գիրք Առաջին») հրապարակության է պատրաստված վաստակաշատ գիտնական, պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վարդան Գրիգորյանի աշխատասիրությամբ:

Նախորդիս պատրաստման պատճառներն է պատմական գիտ. թեկնածու Պավել Չոբանյանը: Նախ է նշել, որ գիրքը հրապարակության պատրաստ էր տրակվել 1990 թ., և ահա, հաջորդիս հրապարակության ծանր ու պարտաբեր գործը հանձն առավ Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Շահեն արքեպիս. Աճեմյանը, որի եռանդուն ջանքերով, «արդենամբք և ծախիսիք» լույս աշխարհ եկավ 804 մեծադիր էջերից բաղկացած այս գիրքը:

Կաթողիկոսական Դիվանը հրապարակության պատրաստվելը կապված է մի շարք դժվարությունների հետ, որոնց հաղթահարումը պահանջում է թե՛ ձեռագրագիտական և թե՛ պատմաբանասիրական հմտություններ: Խնդիրն առավել բարդանում է հարկապես ԺԸ-ԺԹ դդ. ձեռագրերում, դիվանական վավերագրերում գրված նյութը հրապարակության պատրաստելիս: Բանն այն է, որ այդ շրջանում շրագրով հապճեպ գրառված ձեռագրերը մեծապես մասամբ անընթեռնելի կամ դժվարընթեռնելի են: Ուստի մեծ համառություն և մասնագիտական աչք է անհրաժեշտ վերծանելու համար այդ ձեռագրերը: Ահա այսօրինակ համառությամբ և մասնագիտական աչքով զինված Վ. Գրիգորյանը հաղթահարել է բոլոր կարգի դժվարությունները ու, վերծանելով նաև ջնջված հատվածները, բնագրերը դարձրել հրապարակելի:

Ներկայացվող բնագրերն օժտված են նյութը լուսաբանող մասնագիտական կարևոր ու պարզաճանաչ ծանոթագրություններով. գրքից օգտվողների գործը դյուրացնելու նպատակով աշխատասիրողը վերջում կցել է օտար բառերի բառարան: Ցավոք, դարձյալ տեխնիկական սխալների պատճառով գրքում բացակայում են մասնագիտորեն այնքան անհրաժեշտ անվանացանկերը, որոնք կգեղեղվեն Դիվանի հաջորդ հատորում:

Բնագրերին նախորդող ընդարձակ Ներածությունը կազմված է հետևյալ բաժիններից. Ա. Տեղեկություններ Արևելյան Տայասարանի ու շրջակա վայրերի բաղաբանական կացության

վերաբերյալ (V///-XX/V), Բ. Տնտեսական և մշակութային կյանքի արտացոլումը նամակա-
նու մեջ (XX/V-XL///), Գ. Նամակագրություն Քարթլ-Կախեթի թագավորի, նրա ընտանիքի
անդամների ու շրջակա վայրերի փրակալների հետ (XL///-L/V), Դ. Նամակագրություն
Շահամիր Շահամիրյանի, Ղարաբաղի մելիքների և Լազարյանների հետ (L/V-LX/X), Ե.
Նյութեր Էջմիածնի քաղաքի մասին (LX/X-LXXX), Զ. Նյութեր «Թուղթ կանոնականի»,
«Բանալի ճշմարտության» երկերի հեղինակ Հովհաննես երեցի և համբարությունների
մասին (LXXX-XC), Է. Նամակագրական կապեր ասորիների կաթողիկոս Մարթնոսի հետ
(XC-XC///), Ը. Այլ նյութեր և նամակագրության հարցեր (XC/V-CV):

Լավագույնս օգտագործելով բնագրերում առկա փաստական նյութը՝ աշխատասիրողը
Ներածության մեջ փվյալ ժամանակի լայն երևախորքի վրա վերհանում է պատմաքաղա-
քական, սոցիալ-տնտեսական, մշակութային հարաբերությունների ընդհանուր պատկերը:
Ներածության մաս կազմող այդ բաժիններում երևույթները ներկայացվում են խոշոր վորձ-
նահարվածներով: Դրանք ըստ էության ուրվագիծն են ապագայում իրականացվելիք ըն-
դարձակ հետախուզումների: Տարբեր բնագավառների մասնագետներ հարուստ նյութ կա-
ռող են հայթայթել նամակներից: Քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի վե-
րաբերյալ տեղեկությունները կարող են մեծապես նպաստել ԺԸ դարի վերջին քառորդի
պատմության համար մութ մնացած շարք հարցերի լուսաբանմանը:

Հայ ազատագրական մղված պատմության հետազոտման համար մասնավոր շահեկա-
նություն ունեն Ղուկաս Կարնեցու նամակները՝ ուղղված Շահամիր Շահամիրյանին, Ղա-
րաբաղի մելիքներին և Լազարյաններին: Նամակներում ուղղակի թե անուղղակի կերպով
դրսևորվում է Ղուկաս Կարնեցու քաղաքական սթափ մտածողությունը. «Նա գտնում էր,
որ միայն հյուսիսի քրիստոնյա մեծ փրկությունը Ռուսական կայսրությունը կարող է ազա-
տություն և փրկություն բերել օտար, բարբարոս փրկապետության տակ տառապող հայ
ժողովրդին (LX//):

Ազատագրական գաղափարներն ու փրամադրությունները նաև վրաց արքունիքում
փարածելու նպատակով Ղուկաս Կարնեցին պատվիրում է Շ. Շահամիրյանի առաքած
գրքերից մի-մի օրինակ ուղարկել Ներակ արքային (էջ 225): Այսուհանդերձ, գիտակցելով
հայ ժողովրդի գլխին դառնկյան սրի նման կախված ողնջացման մշտական վտանգը՝
Ղուկաս Կարնեցին, խորքում չդավելով իր համոզումներին, հաճախ նամակներ էր հղում
շրջակա վայրերի՝ Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Խոյի խաներին, Կարսի, Կարինի,
Մուշի, Բայազետի, Ախլաթի փաշաներին, Շորագյալի, Մաղսաբերդի, Դիաղինի,
Թուրակղալի բեկերին, դիվանագիտորեն սիրաշահում նրանց, որպեսզի նրանց իսկ
աջակցությամբ քիչ թե շատ ապահովություն երաշխավորի այդ փարածներում ապրող
հայ բնակչության համար:

Դիվանի ներկա հատորում նվազ շահեկան չէ կաթողիկոսական ընտրության հետ կապ-
ված «Թուղթ կանոնականի» իրապարակումը (հավելված՝ 787-793): Դրա կազմումն ու շա-
րադրումը պայմանավորված էր ներքաղաքական, եկեղեցավարչական այն դժվարին կա-
ցությամբ, որ ստեղծվել էր Միմեոն Երևանցի Կաթողիկոսի մահից հետո (1780 Հուլիս 24):
Բանն այն էր, որ նոր կաթողիկոսի ընտրության համար, ըստ ընդունված կարգի, անհրա-
ժեշտ էր դրա մասին տեղյակ պահել գաղթաշխարհի համայնքներին, ինչը սակայն կարող

էր ամիսներ պահանջել: Մինչդեռ այդօրինակ «հապաղումը չափազանց թանկ կնստեր ոչ միայն վանական փոքրամասնության, այլև բուն եկեղեցական կենտրոնի վրա, քանզի հիմնադրամի կողմից կոառնար շրջակա գիշարիչ» (LXXX) փորձերի համար՝ իրականացնելու եկեղեցապարկան գույքի համալրականության իրենց վաղեմի մարտիրոսությունը:

Քաջ գիտակցելով այս վերանգն ու միաժամանակ պարկերացնելով շուրափույթ «ընտրության հետ կապված բոլոր կարգի դժվարությունները» Ղուկաս Կաթողիկոսն իր և հետագայում նման դժվարին իրավիճակներում կայանալիք կաթողիկոսական ընտրություններն օրինական դարձնելու նպատակով գրում է խնդրո առարկա «Թուղթ»: Իրավական բովանդակություն ունեցող այս վավերագիրը, «հենվելով կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ նախորդ կաթողիկոսների կապարածի վրա», սահմանում է կաթողիկոսի ընտրության կարգը*:

ԺԸ դարի 80-ական թվականների արվեստի պատմության, հայրկապես մեծանուն նկարիչ Ղովնաթան Ղովնաթանյանի կյանքի, գործունեության ուսումնասիրման համար անփարակույս իրենց օգտակար ծառայությունը կարող են բերել Ղուկաս Կարնեցու Կ. Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետին, Թիֆլիսի հայոց առաջնորդ Մարտիրոս վարդապետին և գործակալ Կեր Ղազարին, Ղովնաթանին, Զմյուռնիայի առաջնորդ Գալուստ վարդապետին հղած նամակները (էջ 118, 139, 161, 219, 381, 533):

Հրապարակված նամակներում ուշագրավ տեղեկություններ կան Էջմիածնի դպրոցի վերաբերյալ: Այսպեղ դասավանդվել են աստվածաբանություն, հոգևոր երաժշտություն, քերականություն, պատմություն: Առավել շատ են տեղեկությունները դպրոցի նյութական կացության վերաբերյալ:

Ղուկաս Կարնեցու նամակների մեջ բավականին նյութ կա ամբարված Էջմիածնի Ս. Գրիգոր Լուսավորչի անվան տաճարանի մասին: Ինչպես նկատում է աշխատասիրողը, նամակներից երևում է, որ կաթողիկոսը մշտապես իր ուշադրության կենտրոնում է ունեցել տաճարանը, որը «Նամակների մեջ անվանված է "գործարան", և ձգտել է ապահովել այն տաճարական թղթով, ներկերով, զանազան անհրաժեշտ գործիքներով և ավարտի հասցնել հրապարակման վերջված գրքերը: Նպոտ արդեն նա զբաղվել է նրանց վաճառքի և տրամադրության գործով: Ղուկասը քաջ հասկանում էր գրքի նշանակությունը ժողովրդի լուսավորության գործում և այս ասպարեզում նրա ծավալված գործունեությունը արժանի է ամենաբարձր գնահատականի» (LX/X):

«Դիվան Հայոց պատմության» հերթական այս հատորն իր մեջ պարունակված փաստական հարուստ նյութով հնարավորություն կտա մասնագետներին առավել խորությամբ և ըստ էության վեր հանելու փյվյալ պատմական ժամանարաշրջանի շատ իրողություններ:

* Տե՛ս Կ. Գրիգոր վրդ. Մագսուտեան, Ընտրական Մատուոյ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը, թրգմ. անգլ. Ն. Բարաթյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1995, նաև Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Տեղեկությունք ի վերայ համագգային եկեղեցական ընտրողական ժողովոյ վասն ընտրութեան Հայրապետին Ամենայն Հայոց, Ստանբուլ, 1995: